

**ԳԻՐՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ)**

Բանալի բառեր՝ Հայ գիրք, մատենագիտություն, տպագիր մշակութային ժառանգություն, մշակույթ, հետազոտություն:

Keywords: Armenian book, bibliography, printed cultural heritage, culture, research.

Մատենագիտությունների այս շարքը ազգային մատենագիտության տարատեսակ է և կարևոր դեր ունի ՀՀ-ում տպագիր ժառանգության հավաքագրման, մշակման, պահպանման և սերունդներին փոխանցման գործում: Այն նաև մեծ դեր ունի տպագրության մշակույթի հանրայնացման գործում: Գիրքը ՀՀ-ում պետական մատենագիտության շարք է, որի կարևորությունը ընդգծելու, ինչպես նաև մատենագիտության կազմման նախադրյալները հասկանալու համար կատարենք հակիրճ պատմական ակնարկ: Հոդվածի նպատակն է լուսաբանել, հիմնավորել ու արժևորել մատենագիտության կարևորությունը և կենսունակությունը տեղեկատվական տեխնոլոգիաների արդի ժամանակաշրջանում: Հոդվածում խնդիր է առաջադրվել գրի, գրքի և գրատպության պատմության հոլովությունում ցույց տալ մատենագրության ու մատենագիտության զարգացման շարունակականությունը:

Գրի և գրքի վաղագույն ձևերը լայն տարածում են գտել քաղաքակրթության հնագույն օրրաններում՝ հիմք դառնալով մշակութային և գիտակրթական բազմաթիվ կենտրոնների ստեղծմանը: Հայ և օտարալեզու հազարավոր սեպագիր և ձեռագիր գրքերը հանդիսացել և հանդիսանում են ոչ միայն պատմական փաստերի ու իրադարձությունների եզակի և իրական նկարագրություն, այլև դրանցով է պայմանավորված «տեղեկատվական-հաղորդակցական համակարգերի» ծագումն ու զարգացումը, որոնց արդիական նշանակությունը տպագիր տեղեկատվության և տեխնոլոգիական միջոցների ստեղծումից հետո էլ մնում է անսահման մեծ: Գիրքը, անկախ ձևից ու բովանդակությունից, բոլոր ժամանակներում և այսօր էլ հանդիսանում է տեղեկատվության, ընթերցանության, կրթության, դաստիարակության ու գիտական իմացության հիմքը:

Աղբյուրները վկայում են, որ տպագրական արվեստի հետ հայերի ամենավաղ առնչությունը գալիս է դեռ 14-րդ դարից: Սակայն հայկական գրատպությունը ծաղկեց 16-րդ դ., երբ 1512 թ. Վենետիկում Հակոբ Մեղապարտը տպագրեց «Ուրբաթագիրքը»: Հակոբ Մեղապարտը հիմք դրեց հայկական գրատպության և տպագրական քաղաքակրթության սկզբնավորմանը: Այնուհետև մեկը մյուսի հետևից աշխարհի տարբեր ծայրերում սկսեցին ստեղծվել հայկական տպագրության կարևոր օջախներ՝ Կ. Պոլիս (1567), Հռոմ (1584), Լվով (1616), Միլան (1621), Փարիզ (1633), Մարսել (1672), Նոր Զուղա (1638) և այլն [Սուքիասյան, 2013, 18, 54, 68-70]:

Մատենագրությունը հիմնականում մինչև XVIII դ.ստեղծված այն ամենն է, ինչը գրավել է մատյանի մեջ՝ աստվածաբանություն, պատմագրություն, իրավունք, քերականություն, ուղեգրություն, բժշկություն, մաթեմատիկա, տիեզերագիտություն, տոմարագիտություն, արքիմիա, գեղարվեստական գրականություն, խրատական, ներբող, աղոթք, տեսիլ, նամակ, վավերագիր, բանք իմաստասիրաց, ախտարական և հմայական գրականություն և այլն:

Տպագրական գործի զարգացմանը և գրքի հանրահռչակմանը զուգահեռ զարգացավ նաև մատենագիտական աշխատանքը: Հայկական մատենագիտության պատմությունն ընդգրկում է հայ ժողովրդի ստեղծած նյութական և հոգևոր մշակույթի վերաբերյալ հայտնի գրա-

վոր աղբյուրները: Մատենագիտությունը բառը հայկական աղբյուրներում հանդիպում է 5-րդ դարից:

Մատենագիտությունը լայն իմաստով ամբողջությունն է այն գիտելիքների, որոնք վերաբերում են գրավոր աղբյուրներին և ուսումնասիրություններին:

Մատենագիտության նպատակը մատենագիտական տարբեր բնույթի ծանոթագրված և չծանոթագրված ցուցակների, ձեռագրացուցակների, քարտարանների, հայ ձեռագրերի, տպագիր գրքերի, պարբերականների և այլ հրատարակությունների հսկայածավալ զանգվածում կողմնորոշելն է: Հայկական մատենագիտությունը լայն առումով ներառում է նաև հայ գրքի պատմությունը:

Հայկական մատենագիտությունը պայմանականորեն բաժանում են զարգացման 4 շրջանի՝

1 հեթանոսական և վաղ քրիստոնեական՝ մինչև 5 դ.

2 հին և միջնադարյան՝ 5-17-րդ դդ.

3 նոր շրջան՝ 18-19-րդ դդ.

4 նորագույն շրջան՝ 20-21-րդ դդ. [Հայ գրատպություն և գրքարվեստ: Հանրագիտարան, 2015, 696-697, 699-700]:

19-րդ դարում և 20-րդ դարի սկզբում մատենագիտությունը Արևելյան Հայաստանում թույլ էր զարգացած: Կազմվում էին մեծամասամբ ցանկային բնույթի մատենագիտություններ՝ գրադարանային գրացուցակներ, ձեռագրացուցակներ: Տպագիր գրականության իսկական իմաստով մատենագիտություն, որպիսին ստեղծվեց Վենետիկում, Արևելյան Հայաստանում դեռ չկար:

Արդեն նախախորհրդային շրջանում հայկական գրեթե ողջ մատենագիտությունը կազմվում և հրապարակվում էր Հայաստանից դուրս, հայկական մշակութային կենտրոններում՝ Թիֆլիսում, Բաքվում, Պետերբուրգում, Մոսկվայում: Այդ ժամանակահատվածում Հայաստանում՝ Էջմիածնում, հրապարակվել են մի քանի ձեռագրացուցակներ, ինչպես նաև Շուշիում որոշ գրացուցակներ և Գ. Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը» աշխատությունը՝ հրատարակված Ալեքսանդրապոլում:

Խորհրդային ժամանակաշրջանում հայ մատենագիտությունը աչքի ընկավ մի քանի առանձնահատկություններով՝

1. մատենագիտական աշխատանքը դարձավ պետական գործ, հատուկ պետական-գիտական հիմնարկներ սկսեցին զբաղվել մատենագիտական աշխատությունների կազմամբ,

2. հայ մատենագիտության ուղղությամբ կատարվող աշխատանքը հիմնականում կենտրոնացավ Մայր հայրենիքում,

3. մատենագիտությունը դարձավ մասնագիտություն,

4. հրատարակվեցին մի շարք մեծարժեք մատենագիտական աշխատություններ:

1921-1922 թթ. առաջին քայլերը կատարվեցին մատենագիտական աշխատանքը Հայաստանում նոր հիմքերով կազմակերպելու ուղղությամբ: Անհրաժեշտ է նշել, որ առաջինը հանրապետությունում Հայպետհրատը սկսեց գրքերի հետ միասին հրատարակել նաև լույս տեսած և տպագրության պատրաստվող գրքերի ցանկեր, որոնք սակայն մատենագիտական լրիվ տվյալներ չէին պարունակում:

1922 թ.-ին ստեղծվեց ՀԽՍՀ պետական գրապալատը (այսուհետ՝ Գրապալատ), որպես հայ ազգային մատենագիտության կենտրոն: Գրապալատի առաջնահերթ խնդիրն էր հավաքել ու սերունդների համար պահպանել հանրապետության տպագիր արտադրանքի նմուշները, գրքի ու պարբերական մամուլի մատենագիտական նկարագրությունների հիման վրա հրատարակել պետական մատենագիտական օրգաններ՝ ժողովածուներ, տարեգրքեր և գրքի տպագիր քարտեր:

Դեռևս խորհրդային ժամանակաշրջանում Գրապալատն իր որոշակի դերն ուներ հանրապետության ինչպես գրահրատարակչական ոլորտի աշխատանքների կանոնակարգման, տպագիր մշակութային ժառանգության պահպանման բնագավառներում, այնպես էլ մամուլի և գրականության մատենագիտական տեղեկատվության ձևավորման գործում: Հանրապետությունում լույս տեսած ամեն կարգի հրատարակությունների և տպագիր նյութերի՝ գրքերի, թերթերի, ամսագրերի, նոտաների, գեղարվեստական ալբոմների, քարտեզների, գիտաժողովների նյութերի, թատերական և մշակութային միջոցառումների ազդագրերի, ծրագրերի, ցուցահանդեսների բուկլետների, հրավիրատոմսերի և այլն, պարտադիր անվճար օրինակների ստացմամբ Գրապալատում ձևավորվում և պահպանվում էին տպագիր արտադրանքի պետական անձեռնմխելի արխիվային հավաքածուները: 1990-ականների սկզբին անձեռնմխելի հավաքածուներում պահպանվող տպագիր նյութերի թիվը արդեն մոտենում էր մեկ միլիոնի շեմին: Դրանք մատչելի չէին զանգվածային օգտագործման համար և որպես ավանդադրված մշակութային արժեքներ, նախատեսված էին պահպանվելու ապագա սերունդների համար: Շնորհիվ այս հանգամանքի՝ Գրապալատում պահվող հայաստանյան հրատարակությունների անձեռնմխելի հավաքածուները հնարավորինս ամենաամբողջական էին հանրապետության գրադարանային նմանատիպ հավաքածուներից, և ոչ միայն առանձին գրքերի, մամուլի օգանների և այլ նյութերի առումով, այլև մեր մշակույթի պատմության համար առանձին պատմամշակութային փաստերի առումով:

Հավաքված տպագիր նյութերի հիման վրա Գրապալատում կազմվել է ընթացիկ հրատարակությունների պետական մատենագիտությունը, որ կոչված էր սպասարկելու հանրապետության (և ոչ միայն) գրադարաններին, գիտահետազոտական և մշակութային կազմակերպություններին և դրանցում աշխատող հետազոտողներին: 1925 թվականից Գրապալատը կազմում է հայ առաջին մատենագիտական պարբերականը՝ «Գրքի տարեգիր»-ը, որին հետևում են՝ «Ժողովրդային հոգվածների տարեգիր»-ը (1939 թ.) և «Լրագրային հոգվածների տարեգիր»-ը (1949 թ.) [Բեքմեզյան, 2017, 3]:

1970-ական թվականներից Գրապալատը սկսել է հանրապետությունում լույս տեսած գրքերի ընդհանուր հետադարձ մատենագիտության կազմումը: Այս բազմահատոր հրատարակության մեջ արտացոլվել են 1920-ական թվականներից հայկական ՍՍՀ-ում տարբեր լեզուներով լույս տեսած, ինչպես նաև Մոսկվայում, Թբիլիսիում, Բաքվում և միության այլ վայրերում հրատարակված հայերեն գրքերը:

Առաջին հատորը տպագրվել է 1978 թ. և կոչվել է «Գիրքը Սովետական Հայաստանում 1920-1930թթ.»։ Այն ընդգրկում է 1920-1930 թթ. ընթացքում լույս տեսած գրքերի ու գրքույկների մատենագիտական նկարագրությունները:

Մատենագիտության կազմման համար հիմք է հանդիսացել Գրապալատի արխիվը, ինչպես նաև օգտագործվել են գրողների անձնական գրադարաններ, հրատարակչական պլաններ, տարեգրեր և այլ աղբյուրներ:

Այդ տարիներին լույս է տեսել բազմապիսի գրականություն, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրապետության հրատարակչությունները ղեկավարվել են հրատարակչական քաղաքականության և մամուլի մասին կուսակցության կենտրոնական կոմիտեի ու սովետական կառավարության որոշումներով, ունենք հետևյալ պատկերը.

35 անուն (117.000 տպաքանակով)՝ մարքսիզմ-լենինիզմի կլասիկների երկեր,

18 անուն (53.000 տպաքանակով)՝ մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների երկերի մասին գրականություն,

38 անուն (66.000 տպաքանակով)՝ փիլիսոփայական գրքեր,

193 անուն՝ տնտեսագիտական գծով,

217 անուն՝ պատմության գծով,

130 անուն՝ պետության և իրավունքի գծով,

277 անուն գյուղատնտեսական գիտությունների գծով և այլն:

Մատենագիտության մեջ չեն ներառվել նոտաները, ատլասները, լիբրետոները, ալբոմները, դիսերտացիաների ավտոռեֆերատները, հրավիրատոմսերը և այլ մանր նյութեր:

Մատենագիտության տարբեր հատորները կազմելիս մատենագիտական սկզբունքները կրել են որոշակի փոփոխություններ:

Առաջին հատորը կազմելիս մատենագիտական նկարագրությունները կատարվել են ըստ «Единые правила описания произведений печати в библиографических и информационных изданиях» (М, 1970) և «Особенности библиографического описания книг в ретроспективной общей библиографии произведений печати, изданных в союзных и автономных республиках СССР».

Մատենագիտության բոլոր բաժիններում սկզբում տրվում են հայերեն հրատարակված գրքերը, այնուհետև՝ ռուսերեն: Յուրաքանչյուր հայերեն գրքի նկարագրությունից հետո տրվում է նաև ռուսերեն համառոտ թարգմանություն:

Այլ լեզուներով (բացի ռուսերենից) հրատարակված գրքերը նկարագրված են հայերեն, նշված է հրատարակության լեզուն: Մատենագիտության մեջ նյութերը դասավորված են կարգային եղանակով՝ ըստ «Պետական մատենագիտության օրգաններում գրականության դասակարգման» սխեմայի 5-րդ հրատարակության (Մոսկվա, 1971): Յուրաքանչյուր բաժնի ներսում գրքերի նկարագրությունները դասավորված են այբբենական կարգով:

Մատենագիտության յուրաքանչյուր հատոր ունի իր համառոտ առաջաբանը, օժանդակ ցանկեր (անվանացանկ, վերնագրերի ցանկ, հրատարակության վայրերի ցանկ, մատենաշարերի ցանկ, հրատարակչությունների ցանկ, հրատարակություններն ըստ լեզուների) [Գիրքը Սովետական Հայաստանում: Մատենագիտություն, Հատոր 1, 1920-1930 թթ., 1978, 11-13]:

Ժողովածուն նախատեսված է մատենագետների, գրողների, գիտնականների, գրքասերների, գրադարանային աշխատողների համար:

Առայսօր լույս է տեսել հետադարձ մատենագիտության 9 հատոր:

Հ. 1 Գիրքը Սովետական Հայաստանում 1920-1930, 1978, 574 էջ

Հ. 2 Գիրքը Սովետական Հայաստանում 1931-1940, 1988, 953 էջ

Հ. 3 Գիրքը Խորհրդային Հայաստանում 1941-1950, 2003, 660 էջ

Հ. 4 Գիրքը Խորհրդային Հայաստանում 1951-1960, 2004, 1092 էջ

Հ. 5. Գիրքը Խորհրդային Հայաստանում 1961-1970

Ա 1961-1965, 2005, 716 էջ

Բ 1966-1970, 2005, 608 էջ

Հ. 6 Գիրքը Խորհրդային Հայաստանում 1971-1980

Ա 1971-1975, 2006, 667 էջ

Բ 1976-1980, 2007, 723 էջ

Հ. 7 Գիրքը Խորհրդային Հայաստանում 1981-1990

Ա 1981-1985, 2007, 652 էջ

Բ 1986-1990, 2008, 612 էջ

Հ. 8 1991-2000, 2009, 711 էջ

Հ. 9 Գիրքը Հայաստանի Հանրապետությունում 2001-2010

Ա 2001-2005, 2010, 780 էջ

Բ 2006-2010, 2012, 1104 էջ

8-րդ հատորում ներառված է 6238 մատենագիտական նկարագրություն՝

- 578 գրառում կրթության թեմայով
- 45 գրառում տնտեսագիտության թեմայով
- 330 գրառում իրավունքի թեմայով
- 278 գրառում արվեստի թեմայով և այլն

Ցանկեր՝

- Անվանացանկ
- Հեղինակ չունեցող կամ հեղինակը չնշված գրքերի վերնագրերի այբբենական ցանկ
- Հրատարակչությունների և հրատարակող կազմակերպությունների այբբենական ցանկ
- Մատենաշարային հրատարակությունների այբբենական ցանկ
- Հրատարակություններն ըստ տեղերի
- Հրատարակություններն ըստ լեզուների [Գիրքը Հայաստանի Հանրապետությունում: Մատենագիտական ցանկ, հատոր VIII, 1991-2000, 2009, 585-586, 710]:

Հայաստանի ազգային գրադարանի Մատենագիտության և գրադարանագիտության բաժնում կազմվում է ժողովածուի 10-րդ հատորը: 10-րդ հատորը ընդգրկում է 2011-2020 թթ. ՀՀ-ում լույս տեսած գրքերի և գրքույկների մատենագիտական նկարագրությունները: Միասնականությունը պահպանելու նպատակով հատորը կազմվում է մատենագիտական նկարագրության և մատենագիտական գրանցումների դասակարգման այն նույն սկզբունքով, ինչ ժողովածուի նախորդ 9 հատորները: Մատենագիտության բոլոր բաժիններում սկզբում տրվում են հայերեն հրատարակված գրքերը, այնուհետև՝ ռուսերեն, հաջորդիվ՝ այլ լեզուներով:

Մինչև 9-րդ հատորը ընդգրկված հայերեն բոլոր մատենագիտական նկարագրությունները պարտադիր ունեցել են իրենց ռուսերեն թարգմանությունները, իսկ այլ լեզուներով տպագրված գրքերի նկարագրությունները թարգմանվել են հայերեն: 10-րդ հատորում հայերեն գրառումները չեն թարգմանվելու ռուսերեն, իսկ այլ լեզուներով հրատարակված գրքերը նկարագրվում են տվյալ լեզվով: Յուրաքանչյուր բաժնի ներսում գրքերի նկարագրությունները դասավորվում են այբբենական կարգով:

SUMMARY

So we can say: the printed heritage is one of the most important manifestations of civilization. Armenian printing and bibliography have a centuries-old history. State and national bibliography has an important role in the collection, processing and transmission of the printed heritage to the descendants in the Republic of Armenia. It also plays a big role in popularizing print culture.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բեքմեզյան Հովհ. Հայաստանի ազգային գրապալատ (Գործունեությունը և դերը Հայաստանի գիտական-մշակութային կյանքում), Բանբեր Հայաստանի գրադարանների, Երևան, 2017, №2, էջ 2-18, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://is.gd/xi1guU> 10.11.2023:
2. Գիրքը Հայաստանի Հանրապետությունում: Մատենագիտական ցանկ, հատոր VIII, 1991-2000, Երևան, Հայաստանի ազգային գրապալատի հրատ., 2009, 712 էջ:
3. Գիրքը Սովետական Հայաստանում: Մատենագիտություն, հատոր 1, 1920-1930, Երևան, Ա. հ., 1978, 574 էջ:
4. Հայ գրատպություն և գրքարվեստ: Հանրագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարան, 2015, 1120 էջ:
5. Սուքիասյան Գ. Գրքագիտություն և հայ գրատպության պատմագրություն, Երևան, ՀԱԱ հրատ., 2013, 160 էջ: